ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ»

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ

## ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 14, 20.04.10թ.

| | |
|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,072,401 հատ, 25,000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, 10,000 ՀՀ դրամ |

*«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը»:*

ստորագրող անձինք՝

| | | | |
|---|---|---|---|
| Գարիկ Ադամյան | Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչության պետ | [signature] | 20.04.2010 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Արթուր Մելիքյան | Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ | [signature] | 20.04.2010թ. |
| Տիգրան Գալստյան | Գլխավոր հաշվապահ-վարչության անդամ | [signature] | 20/04/2010թ. |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| | | | |
|---|---|---|---|
| Աշոտ Օսիպյան | Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն | [signature] | 20.04.10. |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

20 ապրիլի 2010 թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

19-ը ապրիլի 2010թ.

ՈՐՈՇՈՒՄ N 01/01

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ անցկացված արտահերթ ընդհանուր ժողովը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով թվով 120.000 (մեկ հարյուր քսան հազար) հատ լրացուցիչ հասարակ անվանական բաժնետոմսերի թողարկման հարցի վերաբերյալ որոշեց.

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով լրացուցիչ թողարկել թվով 120,000 (մեկ հարյուր քսան հազար) հատ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի, 5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ անվանական աժեքով, հասարակ անվանական բաժնետոմս:

2. Լրացուցիչ թողարկվող թվով 120,000 հատ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի , 5000 ՀՀ դրամ անվանական աժեքով, հասարակ անվանական բաժնետոմսերը փակ տեղաբաշխմամբ 1 բաժնետոմսը՝ 8,500 (ութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ շուկայական արժեքով՝ տեղաբաշխել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերի միջև:

3. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կողմից լրացուցիչ թողարկվող հասարակ անվանական բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմանները (կցվում է):

4. Տեղաբաշխման արդյունքների, ինչպես նաև փոփոխված կանոնադրության հաստատման նպատակով ընդհանուր ժողով հրավիրել 2010 թվականի մայիսի 31-ին:

Ժողովի նախագահ Բ. Բեգլարյան